

ԿՐՈՆԱԿԱՆ

ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՄԸ

ԱՇՈՑՈՑ ՈՍԵԼՆԵՐԱՐԸ

Պատմութիւնը լի է բախտորոշ եղելութիւններով:

Դիւա, փոփոխութիւն, յեղափոխութիւն նահատաքարկան են մարդկութեան և ազգերու համար:

Այսպէս եղաւ հայ մշակութիւն Ոսկեդարը մեր ժողովուրդին համար:

Ներկայ աշխարհը կը նմանի կրակի վրայ եռացող կաթասի:

Ապահովութեան, ազատութեան, ինքնավարութեան, յառաջդիմութեան և նոր կեանքի սէրը հրգիհի պէս բռնկեր է ամէն կողմ:

Փոփոխութիւն, առաւել ևս լեղաբան խորիւն բառը կարծէք նշանաբանն է և ցուցանիշը լողգերութեան, ընկերութեան և անհատներու:

Հուսիսին, աստղերուն և երկրին լոյս տաւող արեւուն պէս առջ է և բոցավառ՝ նորութեան և յեղափոխութեան գաղափարը:

Յեղափոխութեան մէջ են Միջին և Մայրագոյն Արեւելք, Ափրիկէ և Հարաւային Ամերիկայ:

Յրաժամանակ, Ամերիկայի և Ռուսաստանի պէս՝ ներկայիս յեղափոխութեան կրակով կը մկրտուին ազատ ապրիլ ուղող երկիրներն ու ժողովուրդները:

Փոփոխութիւն, յեղափոխութիւն կայ ամէն կողմ, ամէն մարդի մէջ:

Արմատական փոփոխութիւն, շինարարութիւն կայ քաղաքական, անասական, ընկերային, գիտական, ճարտարարուեստի, նոյնիսկ հոգեւոր և բարոյական կեանքի մէջ: —

Կը թուի թէ այսօր, որեւէ գործի յաջողութիւնն ու հաջողութիւնը պայմանաւոր են նորութեամբ, գիւտով, յեղափոխութեամբ:

Անոնց շնորհիւ մարդիկ կը փորձեն վերջ տալ լնացումի, կը ջանան հինցած,

փոստած և անիրաւ կարգերը փոխանակել նոր և արդար իրաւակարգով:

Բայց ճշմարիտ յեղափոխութիւնը, արփրկարար է, հողի, մասնւոր և զգացումի յեղափոխութիւնն է, եղելութիւնները և երեսօթները գիտելու, դատելու և գործելու նոր եղանակ մը. դատարարակութեան և զարգացումի նամբով իրադրոյթի:

Ուստի, յեղափոխութեան շահակիրը պէտք է աստուածային կայծէ բռնկի, լինի գիտուն, մարդարէ, առաքեալ, ներս, սուրբ, քահանայ, ուսուցիչ, իր կոչումին և գործին սէր մարդ մը:

Իրաւ յեղափոխականը անձնասէր և արկածախնդիր տիպ մը չէ երբեք:

Իսկական յեղափոխականը մարդն է տեսիլքի և նուիրումի, միշտ պատրաստ յաշտառանքի և զոհողութեան, ի սէր նպատակին յաջողութեան:

Անոր գործն ու կեանքը կենդանի խօսքն է, կենաց բանը, գիւր, գիւրէ, վրձինը, դուրը, կարկինը, աստղնաւարը, փորձառեղին:

Անոր նպատակն ու գործը կը լինեն բարի և փրկարար:

Որով յեղափոխութիւնն ու յեղափոխականը հարկ է ներշնչուին Աստուծէ, ժողովուրդի և հայրենիքի սիրով, նուիրում արուեստի և մշակութի, ազատութեան կրակովը բիւրեղացած:

Այս է նկարագրը այն զմայլական յեղաշրջումին և զայն կերտող մեր եռաձեռն Թարգմանիչ Վարդապետներուն, մարտնչ պատկէն և Հայոց Ոսկեդարը:

✱ ✱

Աշխարհի թատերաբեմին վրայ երկացող հզօրները, Կիւրաւ, Դարեհ, Կեսար, Ծ'Նիկիդիան, Համիւ և Հիթլէր, սարսափելի հողմի պէս մահ և աւեր տարածեցին ու անցան, փոշի դարձան: Մինչդեռ մշակութային և քաղաքակրթական արժէքները կը մնան անմահ, անարկայ՝ տիրուղներու զմայլանքին և սիրոյն:

Նշովքի և դատապարտութեան նշաւակ են արկածախնդիր, պատենապաշտ, փառամոլ այն բոլոր անձինքն ու շարժումները, որոնք յանուն յեղափոխութեան

աւեր և արիւն կը սփռեն, ստեղծագործ ձեռքեր կը կտրեն, արուեստի գործեր մոխրի կը վերածեն:

Նեղ ու գոռալէք է ուղիւն ամէն անոնց, որոնք հոգիներ կը կրթեն, սիրտեր և միտքեր կը յեղաշրջեն, վերածնունդ կը ստեղծեն, քաղաքակրթութեան գանձիբայ կը լինին:

Այսպէս է պարագայն Յիսուսի, ճշմարիտ և մեծագոյն յեղափոխականին, որ սորվեցունց աշխարհին՝ արարիչ Աստուծոյ հոտարակաց հայր և մարգոց իրարու եղբայր լինելը, զիրար սիրելու և իրարու օգնելու պարագը, և իւրաքանչիւր հոգիի գերազանց արմէքը:

Եիսուս ցոյց տաւալ թէ ի՞նչպէս երկիր կու գոյ երկինքի Արքայութիւնը, որ ճկարկուն և ըմպելի չէ, այլ արդարութիւն և խղճարութիւն և խնդակիւն Սուրբ Հոգիով (Հռոմ. ԺԴ. 17), հաղորդական սիրտ օրոտ, հոգի է հոգի. թէ Աստուծոյ թագաւորութիւնը հագեկան, ներքին զիճակ է (ՂԿ. ԺԵ 21), որ կ'իւրականանայ վերստին ծնունդով, հոգիի և կրակի մկրտութեամբ, այլ խօսքով՝ ներքին յեղափոխութեամբ:

Անա հիմքն ալ նպատակը Բրիտանոսի սկոտե և Եկեղեցւոյ կողմէ շարունակուող այն ազատարար շարժումին որուն սիրտն է Աւետարանը:

Երկինքի Արքայութեան աշխարհի վրայ իրականացման այս յեղափոխութիւնը երկու հազար տարիներէ ի վեր կ'անէ ալ կը զօրանայ մանանխի հատիկի պէս: Ան իբր արեւ կը բարձրանայ հոգիներու երկնակամարին վրայ, իբր անձրեւ կը տեղայ երկրի վրայ՝ դաւարազարդելու և պողաքերելու համար մարգոց սիրտերն ու միտքերը գիտութեան և արուեստի սքանչելիքներով:

Արեւմտեան քաղաքակրթութիւնը արդիւնք է Եիսուսի և յանուն Բրիտանոսի կատարուած յարատեւ, անարիւն և շինարար յեղափոխութեան, որ հրաբխային պռթկում չէ, այլ մշակական եղափոխում էր, խղճող, աքնաջան և աստիճանական զարգացումով բեղմնաւոր, յարաճուն:

Աւետարանը գէժ է բնութեան, սուրբի աւերի, կործանման, Այս կարգի

բոլոր արեւախրքները և պատահաները անքաւելի մեղքերն են բռնի յեղաշրջումի, Հեռո՛ւ պայանութենէ, մահ և, աւեր սփռել:

Աւետարանի քարոզութեամբ և գործադրութեամբ է որ կարելի կը գտնայ հասնիլ իրաւ յեղափոխութեան նպատակներուն, արդարութեան, իրաւունքի. եղբայրութեան, հասարակութեան, սիրոյ և խաղաղութեան, եւ աշխարհի վրայ եւ մարգոց հոգիներէն ներս:

Այս իմաստով Շնորհաց Ե. Գաբը հայ պատմութեան ամենէն նշանակալիք և արդիւնաւոր յեղաշրջումի շրջանն է, իսկական ոսկեդարը հայկական:

Ձայն կը պարսիք Աւետարանի շինակաւաքարութեան և գործադրութեան:

Թարգմանիչ վարդապետները մեր մեծագոյն յեղափոխականներն են, բաւական լաւագոյն իմաստով: Անոնք առանց արիւնանեղութեան, ազանց ունեւի յաջողեցան ի քլուխ հասնիլ յեղափոխութեան բարձրագոյն նպատակները՝ հայերէն այբուբենէն գիւտով, Աստուածաշունչի ոսկեղինիկ թարգմանութեամբ, ուսման և գիտութեան զարկ տալով, եղբայրութեան, համերայնութեան խաղաղ և ստեղծագործ աշխատանքի միջոցներ հայթայթելով իրենց և զալիք սերունդներու համար:

Եղափոխութիւնը շինութեան և յաւաքգիմութեան համար միայն:

Եղափոխական լինինք Թարգմանչաց պէս: Անոնք օրինակով խանդավառ՝ յագում ընթանալով, զարկ տալու հայկական մշակոյթին և պայանելու մեր ազգային մտածողութիւնները պանծալի:

ԶԴՕՆ ԵՊՍ. ՏԵՐ - ՅԱԿՈԲԵԱՆ

